ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մայիսի 2026 թվականի N 1143-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներովև հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորևբերված աղյուսակումնշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	հանգամանքներիառաջացմանամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25	1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցքի , 7-րդ փողոց 1-ին նրբանցքի և 21-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ	750,000.00	«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	08419558	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Բոշնաղան փող. 1նրբ. տուն 8	05.05.2026թ	Մեծամորի համայնքապետարան	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25	2	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամասի եռաբդիվիզացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ	700,000.00	«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	08419558	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Բոշնաղան փող. 1նրբ. տուն 8	05.05.2026թ	Մեծամորի համայնքապետարան	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված դիմում-հայտարարություն փաստաթղթում Ընթացակարգի հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացվել է 2025 թվականի վերաբերյալ, սակայն պետք է լիներ 2026թվականի համար, ինչպես նաև սույն գնման ընթացակարգի 2.4 կետի 4-րդ ենթակետով պահանջվող մասնագետի գրավոր համաձայնության փաստաթուղթը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավելու վերաբերյալ, հաստատված չէր տվյալ մասնագետի էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:Դրանով պայմանավորված 2026 թվականի մարտի 23-ին գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանություն/ներ/ը: Այնուհետև՝ 2026 թվականի մարտի 25-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի մայիսի 05
ք.Մեծամոր